«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՀ – 1035
30.11.2022թ.

ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան քաղաքային համայնքի
ղեկավար Սևակ Միքայելյանին,
Ավագանու անդամներին

Հարգելի՛ պարոն Միքայելյան,
Ավագանու հարգելի՛ անդամներ

Շնորհակալություն եմ հայտնում երկարատև և արդյունավետ համագործակցության համար:

2022 թվականի ընթացքում «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը և Հրազդան քաղաքային համայնքը համատեղ ջանքերով սոցիալական աջակցություն ցուցաբերեցին համայնքի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 1000 անձանց (տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձիք, փախստականներ, ապաստան հայցողներ, Արցախից տեղահանվածներ և այլն)՝ արձագանքելով շահառուների բազմաբնույթ խնդիրներին և 2022թ. մարտահրավերներին: Գործելով համայնքում Ձեր հետ միասին փոձել ենք մեղմել համայնքի կյանքի դժվարին իրավիճակում հատնված բնակիչների կարիքները, նպաստել համայնքում աղքատության նվազեցմանը ու հնարավորինս աջակցել համայնքում ժամանակավոր բնակություն հաստատած արցախցի մեր հայրենակիցներին:

Ցավով ուզում եմ նշել, որ կազմակերպության կողմից Ձեր համայնքում տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող ծրագրերի շարունակականությունը 2023թ. վտանգված է: Այն հնարավոր է շարունակել միայն ծախսակիսման դեպքում:

Հրազդան համայնքում տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 26,576,250 (քսանվեց միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար երկու հարյուր հիսուն) դրամ: Եթե կազմակերպությունը դիմի կառավարության հայտարարված մրցույթին, ապա կստանա 18,252,700 (տասնութ միլիոն երկու հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր) դրամ, մնացած 8,323,550 (ութ միլիոն երեք հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր հիսուն) դրամն ակնկալում եմ համայնքի կողմից ներդրում: Ծրագրերի իրականացման համար «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը Ձեր համայնքում ներդրել է 12,246,947 (տասներկու միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր քառասունյոթ) դրամի արժողության գույք և սարքավորում:

Կարևորելով տեղական իշխանությունների և հասարակական կազմակերպությունների միջև սոցիալական գործընկերությունը և քաղաքային համայնքի կողմից ֆինանսական ներդրման կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ հուսով եմ, որ քաղաքային համայնքների կամավոր լիազորությունների շրջանակներում հնարավոր կլինի համաֆինանսավորման այս սկզբունքով շարունակել Հրազդան քաղաքային համայնքում իրականացվող ծրագրերը:

Տեղական իշխանությունները, իրենց իսկ տարածքներում կատարելով ներդրումներ սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում, կնպաստեն «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից քաղաքային համայնքում արդեն իսկ ստեղծված և գործող համակարգի հետագա գործունեությանը, կապահովեն խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների շարունակականությունը և բարեկեցությունը:

Խնդրում եմ իմ առաջարկի վերաբերյալ Ձեր որոշման մասին տեղեկացնել, անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ հանդիպման:

Հարգանքով՝
«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Նախագահ / *Ե.Մխիթարյան*

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՄՏԻՑ N 4-3613
05 12 2022թ.

gitally signed by
ZHITARYAN
RVAND
08730335
ate: 2022.12.05

Հայաստան, Երևան 0026, Նժդեհ 42, հեռ. 444-792, 444-793, 444-761, էլ.փոստ. org@ngo.mission.am, URL: www.mission.am
Nzhdeh 42, Yerevan 0026, Armenia, Tel: 444-792, 444-793, 444-761, E-mail: org@ngo.mission.am, URL: www.mission.am